Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1343 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՐՄԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են շահումով խաղի կազմակերպիչների կողմից Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ վերահսկող մարմին) «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շահումով խաղի կազմակերպման գործունեության մասին ամսական հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում հասկացություններն օգտագործվում են օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Հաշվետվությունը վերահսկող մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ էլեկտրոնային համակարգի խափանման վերաբերյալ առկա է պաշտոնական հաղորդագրություն:

4. Հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով վերահսկող մարմին ներկայացնելու օր է համարվում էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով կազմակերպչին ներկայացվող՝ հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցագրում նշված օրը, իսկ էլեկտրոնային համակարգի խափանման դեպքում թղթային եղանակով վերահսկող մարմին ներկայացնելու օր է համարվում հաշվետվությունը փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը:

5. Ընդունված հաշվետվությունների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում վերահսկող

մարմինը դրա մասին՝ հաշվետվությունն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ կազմում է ծանուցագիր, որը դրա կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է կազմակերպչին՝ էլեկտրոնային ծանուցման եղանակով։

Ծանուցագիրը հանձնված է համարվում էլեկտրոնային համակարգի համապատասխան էջում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրվանից։

6. Կազմակերպիչը ոչ ուշ, քան ծանուցագիրը հանձնված համարվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝

1) ծանուցված անհամապատասխանությունների հետ համաձայնելու դեպքում ներկայացնում է շահումով խաղերի կազմակերպման գործունեության վերաբերյալ ամսական ճշտված հաշվետվություն.

2) ծանուցված անհամապատասխանությունների հետ չհամաձայնելու դեպքում էլեկտրոնային համակարգի միջոցով վերահսկող մարմին է ներկայացնում իր առարկությունները կամ բացատրությունները։

7. Մինչև օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը՝ կազմակերպիչը կարող է ներկայացնել հաշվետվության ճշտված տարբերակը։ Այդ դեպքում հիմք է ընդունվում ներկայացրած վերջին հաշվետվությունը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

11.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ